

12.05.2011թ.

գ. Այգուտ

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը հանձնաժողովը նախագահությամբ՝ Ի. Ասատրյանի, անդամությամբ՝ Յու. Թաթարյանի, Ա. Գասպարյանի, Հ. Օհանյանի, Վ. Մնացականյանի, Վ. Պողոսյանի վարչական և ֆինանսական հսկողության շրջանակներում ուսումնասիրեց մարզի Այգուտ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի /Հենրիկ Գաբրիելյան աշխատում է 1996թ./ գործունեությունը 2009-2011թթ. ընթացքում:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման և դրանց օրինականության բնագավառում

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 11 նիստ և ընդունել է 17 որոշումներ:

2010թ. գումարել է 7 նիստ և ընդունել է 10 որոշում:

2011թ. անցած 4 ամիսներին գումարել է 4 նիստ և ընդունել է 5 որոշումներ:

Համայնքի ղեկավարը 2009թ. ընդունել է 8, 2010թ. - 5, իսկ 2011թ. անցած ամիսներին՝ 4 որոշումներ: Նույն թվականներին արձակել է մեկական կարգադրություններ: Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 2010թ. արձակել է 1, 2011թ.-2 հրամաններ:

Համայնքի ավագանին իր 14.01.2009թ. թիվ 1 նիստով հաստատել է համայնքի բյուջեն 12782.9 հազար դրամ եկամտային և նույնքան ծախսային մասով:

20.01.2009թ. թիվ 2 նիստում ստեղծվել է գույքագրման հանձնաժողով, որին հանձնարարվել է գույքագրել սողանքի հետևանքով տուժած քաղաքացիների բնակարանների վիճակը: 6.03.2009թ. թիվ 3 նիստում որոշվել է փոփոխություն կատարել համայնքի բյուջեում:

3.11.2009թ. թիվ 11 նիստի որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքի բյուջեում:

Համայնքի բյուջեում փոփոխություն է կատարվել նաև 01.12.2009թ. թիվ 12 նիստի որոշմամբ: 08.12.2009թ. թիվ 13 նիստում քննարկվել է 2009թ. բյուջեի կատարումը և հաստատվել է 2010թ. տեղական տուրքերի ու վարձավճարների դրույքաչափեր սահմանելու հարցերը:

10.01.2010թ. թիվ 1 նիստում ավագանին հաստատել է 2010թ. բյուջեն՝ 15504.2 հազար դրամ եկամտային՝ 15504.2 հազար դրամ ծախսային մասերով:

25.05.2010թ. թիվ 4 նիստում հաստատվել է աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը: Հաստատվել է 7 հաստիք, որից 3-ը համայնքային ծառայողներ են /առաջին կարգի մասնագետի տեղը թափուր է/: 17.07.2010թ. թիվ 5 նիստում լսվել է բյուջեի փոփոխության հարցը: 25.12.2010թ. թիվ 7 նիստում հաստատվել է տեղական տուրքերի վարձավճարների դրույքաչափերը:

05.01.2011թ. թիվ 1 նիստում հաստատվել է համայնքի 2011թ. բյուջեն՝ 15027.8 հազար դրամ եկամտային և նույնքան էլ ծախսային մասով:

01.04.2011թ. թիվ 4 նիստում փոփոխություն է կատարվել համայնքի բյուջեում: Համայնքի ավագանու ընտրությունները տեղի են ունեցել 2011թ. փետրվարի 27-ին: Սակայն մինչ օրս ավագանին չի հաստատել իր կանոնակարգը, որով խախտվել է ՀՀ ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Համայնքի ավագանին չի հաստատել նաև զարգացման ծրագիրը, որով չի կատարվել ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը:

Ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն ենթարկվել պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման /դրանք են՝ համայնքի բյուջեն, բյուջեում կատարվող փոփոխությունները, տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը, ավագանու կանոնակարգը, համայնքի զարգացման ծրագիրը, համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը, որով չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները: Նախկին ավագանու կանոնակարգը հաստատվել է 01.07.2007թ. թիվ 7 նիստում, որը նույնպես չի ստացել պետական գրանցում: Համայնքի ավագանու որոշումները իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներին և նույն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ հոդվածների դրույթներին: Ավագանու որոշումները չունեն վերնագրեր, որը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի վերաբերյալ, որով չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները: Միաժամանակ պետք է նշել, որ անհատական կամ լոկալ /ներքին/ ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում /տվյալ ակտը/:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է գյուղապետի 11.05.2009թ. թիվ 5 որոշմամբ:

Աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատվել է գյուղապետի 01.06.2009թ. թիվ 6 որոշումով:

20.06.2009թ. թիվ 7 որոշմամբ հաստատվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կարգը: 20.03.2010թ. թիվ 1 որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:

25.05.2010թ. թիվ 2 որոշմամբ ստեղծվել է սողանքների հետևանքով ուսումնասիրող հանձնաժողով:

27.02.2011թ. թիվ 1 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին իր 09.07.2007թ. թիվ 2 որոշումը և հաստատել է աշխատակազմի նոր կանոնադրությունը: 4

2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառներ

« տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերն հաստատելու մասին» թիվ 205-Ա հրամանով /հավելված թիվ 7/ հաստատվել են համայնքային ծառայության 3 պաշտոններ, դրանք են՝

- 1/ աշխատակազմի քարտուղար /1.2-3/
- 2/ աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/
- 3/ աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /3.2-1/

2009թ. մարտի 1-ից աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի պաշտոնը թափուր է և այս ընթացքում թափուր պաշտոնի համալրման մրցույթի հայտարարություն չի տրվել, որով խախտվել է «ՀՀ համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Մինչ այդ համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են գյուղապետի 04.01.2007թ. թիվ 2 որոշմամբ, իսկ ծառայողները այդ պաշտոններում նշանակվել են 04.01.2007թ. թիվ 2 որոշմամբ: Գյուղապետի 09.07.2008թ. թիվ 1 որոշմամբ ստեղծվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով: 09.07.2008թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը: Նույն օրը թիվ 3 որոշմամբ աշխատակազմի քարտուղարի ատեստավորման օր է նշանակվել 2008թ. հուլիսի 14-ը: Ատեստավորումից հետո ՀՀ օրենքով սահմանված կարգով 17.07.2008թ. թիվ 4 որոշմամբ աշխատակազմի քարտուղարին շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան /հիմք է ընդունվել ատեստավորման հանձնաժողովի 14.07.2008թ. թիվ 2 որոշումը/:

20.03.2009թ. թիվ 1 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել գյուղապետի 04.01.2007թ. «ՀՀ համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 2 որոշումը և հաստատվել են ՀԾ պաշտոնների անձնագրերը նոր խմբագրությամբ: Հիմք ընդունելով ՀՀ ՏԿՆ հրամանը, ըստ որի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը ընդգրկվել է գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախումբ գյուղապետի 23.03.2009թ. թիվ 2 որոշմամբ նրան շնորհվել է ՀՀ համայնքային ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Գյուղապետի 05.05.2009թ. թիվ 3 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 09.07.2008թ. թիվ 2 որոշումը և հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր աշխատակարգերը: 06.05.2009թ. թիվ 4 որոշմամբ աշխատակազմի առաջատար ծառայողին /3.1-1/ գործուղվել է մասնակցելու վերապատրաստման, իսկ 02.08.2009թ. թիվ 8 որոշմամբ ատեստավորման օր է նշանակվել օգոստոսի 4-ը, որից հետո եռօրյա ժամկետում աշխատակազմի քարտուղարի հրամանով նրան շնորհվել է համապատասխան դասային աստիճան:

23.09.2010թ. թիվ 3 որոշմամբ սահմանված կարգով լրացումներ են կատարվել աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի 7-րդ գլխի 11-րդ կետի մեջ, կապված զորակոչի զինահավաքի և վարժական հավաքների կազմակերպման պարտականություններ սահմանելու հետ: 03.05.2011թ. թիվ 2

որոշմամբ սահմանված կարգով փոփոխություն է կատարվել աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի 6-րդ գլխի 10-րդ կետի <<ա>> ենթակետի մեջ:

12.05.2011թ. թիվ 3 որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին 09.07.2008թ. թիվ 1 որոշումը և հաստատվել է այդ հանձնաժողովի նոր կազմը /կապված նաև ավագանու անդամների փոփոխության հետ/:

Համայնքային ծառայության կադրերի գործերի վարման մեջ կան թերություններ, որոնք տեղում հանձնարարվեց կարճ ժամկետում շտկելու և կադրերի գործերը վարել <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

Աշխատակազմի քարտուղարի անձնական գործում բացակայում էր գույքի և եկամուտների հայտարարագրման մասին ՏՀՏ-ի տեղեկանքը, որը <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի համաձայն պաշտոնից ազատման հիմք է: Համայնքում գործավարությունը իրականացվում է ոչ գրանցամատյաններով այլ դիմումները, գրությունները և այլ թղթակցությունները պահվում են թղթապանակներում:

3. Համայնքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և ենթակառուցյունները

Գյուղը բնակեցված է փախստականներով, մոտ 400 ընտանիք, բնակչության թիվը 1038 մարդ, որից գյուղում մշտապես բնակվում են 1033-ը, ժամանակավորապես բացակայում են 15-ը: Գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված են 540 մարդ, այլ աշխատանքներում ընդգրկված են 85-ը:

Գյուղացիները հիմնականում զբաղված են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Համայնքում առկա է 643 խոշոր, 1096 մանր եղջերավոր անասուններ, 160 խոզեր, 2623 թև թռչուններ և 926 մեղվաընտանիքներ:

Համայնքում գործում է մշակույթի տունը, որտեղ էլ տեղավորված է գյուղապետի գրասենյակը:

Համայնքում գործում է միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում են 165 երեխաներ, գործում է բուժկետը, որը վերանորոգված է:

Համայնքում գործում են 5 առևտրի կետեր:

Կա մեկ խոշոր ֆերմերային տնտեսություն/մոտ 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուններով/:

Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 30 կմ, որից վերանորոգվել է մոտ 5 կմ-ը:

Խմելու ջուրը ստացվում է 2 վայրերից՝ մեկը՝ 20 կմ, մյուսը՝ մոտ 10 կմ: Վերանորոգման փուլում է համայնքով անցնող հանրապետական նշանակության ճանապարհը:

Գյուղապետի կողմից վերջին 2.5 տարում վերանորոգվել են մոտ 30 կմ դաշտամիջյան ճանապարհներ: 2009թ. ծրագրի շրջանակներում 5 ընտանիքների տրամադրվել են անասուններ, խոզեր, թռչուններ:

Իսկ 2010թ. 20 ընտանիքների տրվել են յուրաքանչյուրին 2 խոշոր, 3 ոչխար, 3 խոզ և 10 հավ:

2010թ. վերանորոգվել է մշակույթի տան շենքը և գյուղապետարանի սենյակները, ձեռք է բերվել գույք /գրասենյակային/:

Մաս-առ-մաս 2008-2010թթ. վերանորոգվել է խմելու ջրի ջրամբարը: Համայնքը գտնվում է ակտիվ սողանքային գոտում:

Սողանքների հետևանքով տուժել են շատ ընտանիքներ: Հաշվի առնելով այդ հանգամանքը ՀՀ կառավարությունը պետական բյուջեի միջոցներից բնակարանների գնման վկայագրեր է տրամադրել 48 ընտանիքների, տրվել են նաև 15 վագոն տնակներ, որոնցից 8-ը ներկայումս գյուղում է, իսկ մյուսները համապատասխան թույլտվության տրամադրվել են Վահան համայնքին՝ 2 հատ, Վարդենիկ համայնքին՝ 2 և Սևան, Գավառ Մարտունի քաղաքների բնակիչներին՝ մեկական հատ:

4. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Այգուտ համայնքը մարզի սակավահող համայնքներից է և, բնականաբար ունի վարչական բյուջեի մաս կազմող սեփական եկամուտների փոքրաթիվ ծավալ:

Բավական է նշել, որ վերջին 6-7 տարիներին սեփական եկամուտների տարեկան պլանները կազմել են 1.9-ից 2.2 մլն դրամ, որոնց տեսակարար կշիռը վարչական բյուջեի ընդամենը եկամուտներում կազմել են 12.0-ից 20.0%: Այդ պայմաններում անգամ, օրինակ, 2003-2007թթ. սեփական եկամուտների կատարողականը տատանվել է 15.2%-ից /2004թ./-47.4%-ի /2007թ./ միջակայքում՝ մշտապես ցածր մնալով մարզի միջին մակարդակից: Իսկ ահա 2008-2011թթ. արձանագրվել է դրական տեղաշարժ, 2008թ. սեփական եկամուտների կատարողականը կազմել է 68.6, 2009թ.՝ 103.4, 2010թ.՝ 103.0 և 2011թ. 4 ամիսներին 36.0%, որոնք գերազանցել են մարզի համապատասխան միջին ցուցանիշներին: Չունեն աշխատավարձի, սոցվճարի հողվածներով նախորդ տարիների պարտքեր, հողի հարկի գծով ապառքները փոքր գումար են կազմում:

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ1.04.11թ.	%
Հողի հարկ	1674.5	1588.3	95.1	1869.7	1870.7	100.0	1674.5	625.6	37.4
Գույքահարկ	145.2	184.9	127.0	145.2	148.1	102.1	145.2	49.7	34.3
Տեղական տուրքեր	50.0	50.0	100.0	50.0	50.0	100.0	50.0	-	-
Հողի վարձավճար	199.1	317.4	159.0	29.3	148.6	510.3	29.3	7.2	24.6
Ընդ. սեփ. եկամուտներ	2068.8	2140.6	103.4	2094.2	2157.3	103.0	1899.0	682.5	36.0
Պատ. լիազորույթ.	660.0	660.0	100.0	660.0	600.0	90.1	600.0	-	-
Դրուտացիա	10054.2	10054.2	100.0	12050.0	12050.0	100.0	12317.9	4106.0	33.3
Ընդամենը եկամուտներ	12783.0	12854.8	100.6	14804.2	14867.3	100.4	15316.9	4818.5	31.4

Համայնքի ընդամենը եկամուտների աճը բացատրվում է ՀՀ պետբյուջեից տրամադրվող դոտացիաների տարեցտարի ավելացող միջոցներով:

Բյուջետային ծախսերը 2009թ. կատարվել են 96.8, 2010թ.՝ 99.0 և 2011թ. 4 ամիսներին՝ 29.1%-ով, ընդ որում, աշխատավարձի և սոցվճարների հոդվածներով փաստացի ծախսերը ընդամենը ծախսերում կազմել են 55.2-ից 69.3%:

Համայնքի սակավ ապահովված ընտանիքներին որպես ֆինանսական օգնություններ տրամադրվել են՝ 3000.0 հ/դրամ, 2010թ. 4 ամսում՝ 1535.0 հ/դրամ գումարներ: Բյուջեի տնտեսագիտական դասակարգման մնացած հոդվածներով կատարված փաստացի ծախսերը տատանվում են 21.6-ից 400.0 հ/դրամի շրջանակում և կատարվել են ավագանու կողմից հաստատված գումարների սահմաններում:

2009-2011թթ, ավագանու որոշումներով, աշխատակազմում սահմանվել են 6-ական հաստիքային միավորներ, 30.0-ից 150.0 հ/դրամի հասնող դրույքաչափերով, ամսական 535.0 հ/դրամ աշխատավարձի ընդհանուր գումարով: Սեփական եկամուտների առաջադրանքները կատարելու համար 2009թ. աշխատակազմին վճարվել էր 960.0 հ/դրամ պարգևատրում:

4251 <<շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում>> հոդվածով 2009թ. կատարվել են 263.0 հ/դրամ, 2010թ.՝ 1888.1 հ/դրամի աշխատանքներ, խմելու ջրատարի կառուցման և ընթացիկ նորոգումների, վարչական շենքի, կուլտուրայի տան շենքի ընթացիկ նորոգումների նպատակով:

Ֆոնդային բյուջեով հաստատվել և կատարվել են 2009թ.՝ 177.2 հ/դրամ, 2010թ.՝ 1023.0 հ/դրամ, 2011թ. 4 ամսում՝ 30.0 հ/դրամ ծախսեր, հիմնականում համայնքի խմելու ջրատարի ընթացիկ նորոգումների և համակարգչային սարքավորումների /500.0 հ/դրամ, 2010թ./ ձեռքբերման նպատակով:

Գնումները կատարվել էին <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի որոշ խախտումներով:

Բացթողումներ կային հաշվապահական հաշվառման իրականացման աշխատանքներում, չէր վարվում գլխավոր գիրք, ծախսերը գրանցված չէին հաշվապահական հաշիվներում, հողի հարկի գանձումները անդորրագրերում համապատասխան սյունակներում չէին գրանցված և այլն:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն







Առաջարկել մարզի Այգուտ համայնքի ղեկավարին՝

1. ավագանու նիստում հաստատել ավագանու կանոնակարգը և պետական գրանցման ենթարկելուց հետո դնել գործողության մեջ.
2. մշակել, ավագանու որոշմամբ, հաստատել և գործողության մեջ դնել համայնքի զարգացման ծրագիրը.
3. ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ներկայացնել ընդունված և ընդունվող նորմատիվ իրավական ակտերը.

4. ընդունվող իրավական ակտերը վերնագրերով, իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին:
5. համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ թափուր պաշտոնն համալրելու համար հայտարարել մրցույթ:
6. համայնքային ծառայողների կադրային գործերի վարումն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան:
7. աշխատակազմի քարտուղարի կողմից 2010թ. համար իր գույքի և եկամուտների մասին չհայտարարագրելը, համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի բ/ ենթակետի նրան պաշտոնից ազատելու հիմք է:
8. հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, վարել գլխավոր գիրք, ծախսերը գրանցել հաշվապահական հաշիվներում, ճիշտ լրացնել հողի հարկի գանձումների անդորրագրերը:
9. գնումները իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Առաջարկություն – առաջարկվում է տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել տեղ գտած թերությունները կարճ ժամկետում վերացնելու ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

	Ի. ԱՍԱՏՐՅԱՆ
	ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
	Հ. ՕՀԱՆՅԱՆ
	Վ. ՄԼԱՅԱԿԱՆՅԱՆ
	Վ. ՊՈՂՈՍՅԱՆ